


ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թաթուկ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման
ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ

Բանալի բառեր. տնտեսական անվտանգություն, ճգնաժամ, գնողունակություն,
ավելացված արժեք, տնտեսական աճ

Մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ-ն տնտեսական աճի տեմպերով դասվում էր աշխարհում ամենաարագ զարգացող տնտեսությունների շարքը: Այդ ժամանակահատվածում տնտեսական աճի տեմպերով ՀՀ առաջ էր ոչ միայն ցածր-միջին եկամուտներով երկրների խմբում (ըստ Համաշխարհային բանկի դասակարգման, որում նաև Հայաստանն է), այլ նաև բարձր եկամուտներով երկրների խմբում և աշխարհում ընդհանրապես:




Գծապատկեր 1. ՀՀ ՀՆԱ-ի աճի համեմատություն աշխարհի երկրների հետ¹

2000-2008թթ. ընթացքում ՀՀ տնտեսությունը ենթարկվել է զգալի կառուցվածքային փոփոխությունների, որը պայմանավորված է տնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և կապիտալ շինարարության մեջ արձանագրված կառուցվածքային տեղաշարժերով: Մասնավորապես, տնտեսության երկու հիմնական ոլորտների՝ արդյունաբերության ու գյուղատնտեսության տեսակարար կշիռները ՀՆԱ

¹ Գծապատկերի համար ՀՀ ՀՆԱ-ի տվյալները՝ ՀՀ ԱՎԾ կայքից՝ <http://www.armstat.am/am/?nid=126&id=01001>, իսկ մյուսները՝ համաշխարհային բանկի կայքից՝ http://databank.worldbank.org/data/reports.aspx?Code=NY.GDP.MKTP.KD.ZG&id=af3ce82b&report_name=Popular_indicators&type=series&ispopular=y

մեջ անընդհատ նվազել են: Այսպես, եթե 2000-2004թթ. դրանք միասին ապահովել են ՀՆԱ շուրջ 45%-ը, ապա 2008-2010թթ. այդ ցուցանիշը հասել է մոտ 30%-ի: Իրավիճակը լրիվ հակառակն է շինարարության դեպքում՝ 2000-2008թթ.-ի ընթացքում ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ մեջ անընդհատ աճել է և արդեն 2008թ.-ին այն ապահովել է ՀՆԱ ավելի քան 1/4-ը: Գծապատկեր 2-ից երևում է, որ 2004-2008թթ. շինարարության ոլորտի աճը 1.5-2 անգամ գերազանցել է տնտեսական աճի միջին ցուցանիշը: Աճի նման աննախադեպ տեմպերը ոչ միայն նպաստել են երկնիշ տնտեսական աճին, այլև հանգեցրել են ՀՆԱ մեջ շինարարության մասնաբաժնի հետևողական մեծացմանը: Իսկ հետճգնաժամային ժամանակահատվածում շինարարության շարունակական անկումը նույն կերպ նվազեցրել է նաև ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ մեջ՝ 2013-ին մոտեցնելով 10%-ի սահմանագծին:




Գծապատկեր 2. ՀՀ տնտեսության ու շինարարության ոլորտի աճի շարժընթացները և ՀՆԱ մեջ շինարարության մասնաբաժինը 2002-2014թթ.²

Շինարարության ֆիզիկական ծավալների ու ՀՆԱ կառուցվածքում դրա մասնաբաժնի շարժընթացը վկայում են, որ ոլորտը եղել է 2003-2008 ժամանակահատվածի աճի հիմնական շարժիչ ուժը և հետճգնաժամային դանդաղ վերականգնման հիմնական «մեղավորը»: Ընդ որում, պետք է նշել, 2003-2008թթ. շինարարության ծավալների աճը ՀՀ-ում հիմնականում տեղի է ունեցել օգտագործվող շինանյութերի և սարքավորումների ներմուծման հաշվին և չի նպաստել շինարարության հետ փոխկապակցված այլ ոլորտների և արտադրությունների համամասնական աճին: Այդ դեպքում շինարարության ծավալների աճը կարող էր դառնալ «համակարգային» տնտեսական աճի

² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալների բազա 2004-2014թթ.
<http://www.armstat.am/am/?nid=126&id=01001>,
<http://www.armstat.am/am/?nid=126&id=04001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>, շինարարության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ՝ հեղինակի հաշվարկներ:

«շարժիչը»՝ ապահովելով համաչափ տնտեսական զարգացում: Ի թիվս այլ գործոնների, (դրամի արժևորման միջոցով ներմուծման խրախուսում, շինարարության ծավալման տարերային և չհամակարգված բնույթը և այլն) դրան նպաստել է նաև ներմուծումը տեղական արտադրությամբ փոխարինելուն ուղղված տնտեսական քաղաքականության մեջ գործնական քայլերի բացակայությունը: Այսպիսի մոտեցումը պայմանավորել է շինարարության ոլորտի փոքր բազմարկչային (մուլտիպլիկատիվ) ազդեցությունը տնտեսության վրա, քանի որ ներմուծման խթանման միջոցով մեծացել է երկրից կապիտալի արտահոսքը: Այսպես, 2002-2007 թթ.ին ՀՀ ներմուծումն ավելացել է շուրջ 4 անգամ, իսկ միայն շինանյութերի ներմուծումը շուրջ 8.5 անգամ³: Արդյունքում, շինարարության և տնտեսության մյուս ոլորտների (այդ թվում՝ շինանյութերի արդյունաբերության) աճի տեմպերի միջև առաջացել է խզում, որն անընդհատ մեծացել է, ինչի հետևանքով շինարարությունը կարծես թե «կտրվել է» տնտեսության մյուս ոլորտներից, ուստի ժամանակի ընթացքում ՀՆԱ-ի կառուցվածքում ոլորտի մասնաբաժնի ավելացումը տեղի է ունեցել ի հաշիվ տնտեսության մյուս ոլորտների անկման: Իսկ շինարարության աճի արդյունքում տնտեսության մեջ մնացել է միայն ոլորտի ավելացված արժեքը: Գծնաժամից հետո 2010թ.-ից սկսած արդյունաբերության և գյուղատնտեսության մասնաբաժինները ՀՆԱ-ում համեմատաբար կայունացել են, իսկ շինարարության անկումն ուղեկցվել է ծառայությունների մասնաբաժնի աճով (տե՛ս գծապատկեր 3.):



Գծապատկեր 3. ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը 2002-2014թթ.⁴

³ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ վիճակագրական տարեգրքեր. 2006թ.՝ <http://www.armstat.am/file/doc/490.pdf>, էջ 468-478, 2009թ.՝ <http://www.armstat.am/file/doc/99458138.pdf>, էջ 435-445, 2012թ.՝ <http://www.armstat.am/file/doc/99473898.pdf>, էջ 445-456, 2015թ.՝ <http://www.armstat.am/file/doc/99473898.pdf>, էջ 446-457, հաշվարկները հեղինակի:
⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի տվյալներ, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01002&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>, <http://www.armstat.am/am/?nid=126&id=02001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

Արդեն 2014թ.-ին ծառայություններն ապահովել է ՀՆԱ-ի կեսից ավելին, ինչը վկայում է 2008թ.-ի համեմատ ՀՆԱ-ի աճի «թիրախների» փոփոխության մասին: ՀՆԱ-ի մեջ ծառայությունների ոլորտի գերակայությունը, սակայն, չի ստեղծում կայուն տնտեսական աճի ապահովման երաշխիքներ, իր հերթին ձևավորելով ՀՀ տնտեսական անվտանգության նոր սպառնալիքներ: Դրանք որոշելու համար անհրաժեշտ կլինի ՀՀ-ում տնտեսական աճի ապահովման հնարավորությունները դիտարկել տնտեսության ձևավորված կառուցվածքի պայմաններում՝ գնահատելով այն տնտեսական անվտանգությունը տեսանկյունից: Այսպես, արտադրական եղանակով ՀՆԱ-ն հաշվարկվում է.

ՀՆԱ=“Ավելացված արժեք” (համախառն, հիմնական գներով)⁵ + “Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)”: Իր հերթին.

Ավելացված արժեք = $A1+A2+A3+A4+A5+A6+A7+A8+A9+A10+A11+A12+A13+A14+ A15+\$ՄԱԶԾ$ ⁶, որտեղ A1-A15 տնտեսական գործունեության տեսակներն են (ՏԳՏԴ խմբ. 2): Դիտարկենք 2010-2014թթ. եռամսյակային ՀՆԱ-ի արտադրությունն ու կառուցվածքն⁷ ըստ տնտեսական գործունեության տեսակների (ՏԳՏԴ խմբ.2)՝ ընթացիկ տարեկան գներով:

[D5%A5%D5%AC,](http://www.armstat.am/am/?nid=126&id=02004&submit=%D5%A5%D5%AC)
[http://www.armstat.am/am/?nid=126&id=02004&submit=%D5%A5%D5%AC,](http://www.armstat.am/am/?nid=126&id=02004&submit=%D5%A5%D5%AC)
[http://www.armstat.am/am/?nid=126&id=04001&submit=%D5%A5%D5%AC,](http://www.armstat.am/am/?nid=126&id=04001&submit=%D5%A5%D5%AC)
[http://www.armstat.am/am/?nid=126&id=06002&submit=%D5%A5%D5%AC,](http://www.armstat.am/am/?nid=126&id=06002&submit=%D5%A5%D5%AC) հաշվարկը՝ հեղինակի:

⁵ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2014, 2014թ., էջ 214
<http://armstat.am/file/doc/99489223.pdf>, ՀՀ ԿԲ, Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի կառուցվածքը /
https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&cad=rja&uact=8&ved=0CBwQFjAAahUKewj30Nj70_PGAhXpFNsKHdkUAds&url=https%3A%2F%2Fwww.cba.am%2FStorage%2FAM%2Fdownloads%2Fstat_data_arm%2FGDPprod.a.Arm%2520NACE%25202.xls&ei=cC-CyVffYBOmp7AbZqYTYDQ&usg=AFQjCNEHZAzvuiehTMDblXnc66rgVpsJ1A/

⁶ \$ՄԱԶԾ՝ ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները:
⁷ 2010թ. մյուս տարիների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով մեր կողմից կատարվել են որոշ խմբավորումներ, օրինակ՝ “Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն” և “Չկնորսություն, ձկնաբուծություն” 2010թ. տվյալները միավորվել են, քանի որ 2011-2014թթ. ՀՀ ԱՎԾ-ն տվյալը ներկայացնում է “Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն” տարբերակով, այդ պատճառով առաջացել են որոշակի տարբերություններ ՏԳՏԴ խմբ.2-ում առաջարկված դասակարգման հետ, սակայն բովանդակությունը դրանից չի փոխվել:

Աղյուսակ 1. ՀՆԱ-ի բաղադրատարրերը

A1. Գյուղատնտեսություն անտառային տնտեսություն և ձկնորսություն	A2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	A3. Մշակող արդյունաբերություն	A4. Էլեկտրոգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
A5. Շինարարություն	A6. Մանրամեծածախ առևտուր, ավտոմեքենայի նորոգում	A7. Հյուրանոցներ և ռեստորաններ	A8. Տրանսպորտ և կապ
A9. Ֆինանսական և ապահովագրական գործ	A10. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	A11. Պետ. կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոց. ապահովագր.	A12. Կրթություն
A13. Առողջապահություն և սոցիալական ծառայություններ	A14. Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ	A15. Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	

ՀՆԱ-ի ամփոփ ցուցանիշը, ըստ՝ “Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)” և “Արտադրանքի հարկեր (համած սուբսիդիաներ)”, իսկ դրա հիման վրա ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը ներկայացված է՝ ըստ աղյուսակ 1-ի տարանջատման: Տնտեսական գործունեության տեսակների (ոլորտների) փոխկապվածությունն ու զգայունությունը միմյանց ու ՀՆԱ-ի նկատմամբ, ինչպես նաև ՀՆԱ-ի զգայունությունը տնտեսության առանձին ոլորտների թողարկման ծավալների նկատմամբ ցույց կտան նշված փոփոխականների զույգային կոռելիացիայի գործակիցները:

Կոռելացիայի գործակցի նշանը ցույց է տալիս տվյալ երկու փոփոխականների փոփոխման ուղղությունները. “+” նշանի պարագայում կարելի է պնդել, որ դիտարկվող փոփոխականները աճում կամ նվազում են միաժամանակ, “-” նշանը վկայում է այն մասին, որ փոփոխականներից մեկի աճը զուգակցվում է մյուսի նվազմամբ և հակառակը: Կոռելացիայի գործակցի մեծությունը բնորոշում է փոխկապվածությունը, եթե >0.5, ապա ցուցանիշները բարձր աստիճանի փոխկապված են, հակառակ դեպքում՝ ոչ⁸: Աղյուսակ 3.2.2 հիման վրա դիտարկենք ՀՀ ՀՆԱ-ի առանձնահատկությունները. Օրինակ՝ GDP-A1՝ 0.9 => ՀՆԱ-ի և գյուղատնտեսության աճը բարձր աստիճանի կոռելացված են, այսինքն, ՀՆԱ-ն բավական զգայուն է գյուղատնտեսության ոլորտի թողարկման ծավալների նկատմամբ և հակառակը:

⁸ Gujarati, Basic econometrics, Fourth edition, p.121-131.

Աղյուսակ 2. Զույգային կոռելացիայի գործակիցների մատրից⁹

	GDP ¹⁰	A1	A10	A11	A12	A13	A14	A15	A2	A3	A4	A5	A6	A7	A8	A9
GDP	1,0	0,9	0,2	0,5	-0,2	0,7	0,4	0,3	-0,3	0,3	0,1	0,6	0,5	0,3	0,0	0,2
A1	0,9	1,0	0,2	0,5	-0,3	0,7	0,2	0,2	-0,2	0,3	-0,1	0,6	0,4	0,3	0,1	0,3
A10	0,2	0,2	1,0	-0,2	0,0	0,1	0,0	-0,3	0,2	0,2	0,2	0,2	0,0	-0,1	-0,2	-0,2
A11	0,5	0,5	-0,2	1,0	-0,2	0,7	0,5	0,6	-0,1	0,2	0,3	0,4	0,6	0,4	0,0	0,3
A12	-0,2	-0,3	0,0	-0,2	1,0	-0,1	0,1	0,1	0,2	0,1	0,0	0,1	0,2	0,4	0,1	0,4
A13	0,7	0,7	0,1	0,7	-0,1	1,0	0,6	0,5	-0,1	0,5	0,2	0,7	0,7	0,6	0,0	0,4
A14	0,4	0,2	0,0	0,5	0,1	0,6	1,0	0,4	-0,3	0,4	0,3	0,0	0,6	0,4	0,0	0,4
A15	0,3	0,2	-0,3	0,6	0,1	0,5	0,4	1,0	0,4	0,0	0,6	0,3	0,3	0,7	-0,3	0,3
A2	-0,3	-0,2	0,2	-0,1	0,2	-0,1	-0,3	0,4	1,0	-0,3	0,5	0,1	-0,2	0,3	-0,1	-0,1
A3	0,3	0,3	0,2	0,2	0,1	0,5	0,4	0,0	-0,3	1,0	0,3	0,3	0,7	0,1	-0,1	0,1
A4	0,1	-0,1	0,2	0,3	0,0	0,2	0,3	0,6	0,5	0,3	1,0	0,0	0,3	0,3	-0,5	-0,1
A5	0,6	0,6	0,2	0,4	0,1	0,7	0,0	0,3	0,1	0,3	0,0	1,0	0,6	0,5	0,2	0,2
A6	0,5	0,4	0,0	0,6	0,2	0,7	0,6	0,3	-0,2	0,7	0,3	0,6	1,0	0,4	0,0	0,2
A7	0,3	0,3	-0,1	0,4	0,4	0,6	0,4	0,7	0,3	0,1	0,3	0,5	0,4	1,0	-0,2	0,5
A8	0,0	0,1	-0,2	0,0	0,1	0,0	0,0	-0,3	-0,1	-0,1	-0,5	0,2	0,0	-0,2	1,0	0,4
A9	0,2	0,3	-0,2	0,3	0,4	0,4	0,4	0,3	-0,1	0,1	-0,1	0,2	0,2	0,5	0,4	1,0

Համանման ձևով վերլուծելով տնտեսական գործունեության բոլոր տեսակները՝ առանձնացնելով 3 խումբ.

1. **ՀՆԱ-ն զգայուն է** (երբ $0.5 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 1)՝ գյուղատնտեսության, շինարարության, առողջապահության ոլորտներում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ:

2. **ՀՆԱ-ն համեմատաբար թույլ զգայուն է** (երբ $0 \leq$ կոռելացիայի գործակից ≤ 0.5)՝ մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, առևտրի, հյուրանոցների և ռեստորանների, տրանսպորտի և կապի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, անշարժ գույքի, պետական կառավարման, կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների, տնային տնտեսությունների վարման ծառայությունների ոլորտում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ¹¹:

3. **ՀՆԱ-ն համեմատաբար քիչ զգայուն է, սակայն հակառակ ուղղությամբ է փոփոխվում** (երբ $0 \geq$ կոռելացիայի գործակից ≥ -0.5)՝ հանքա-

⁹ Զույգային կոռելացիայի գործակիցները հաշվարկվել են հեղինակի կողմից Eviews 4 ծրագրային փաթեթի կիրառմամբ:

¹⁰ GDP=ՀՆԱ

¹¹ Հասկանալի է, որ մշվածները ոչ թե չեն ազդում ՀՆԱ-ի վրա, այլ պարզապես դրանց արտադրման ծավալները համեմատաբար կայուն են և չեն պայմանավորում ՀՆԱ-ի զգալի փոփոխությունները:

գործական արդյունաբերության և կրթության ոլորտում ստեղծվող արդյունքի (ավելացված արժեքի) նկատմամբ:

ՅՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունները տնտեսական անվտանգության տեսանկյունից գնահատելու համար պարզենք.

1. այն ոլորտները, որոնք համեմատաբար կայուն թողարկում ունեն (2-րդ կետի ոլորտներ), պահպանում են թողարկման ծավալները, թե առկա են տատանումներ,

2. ինչ միտումներ են առկա այն ոլորտներում, որոնց նկատմամբ ՅՆԱ-ն բավական զգայուն է. աճում են, թե նվազում,

3. թողարկման ծավալի փոփոխությունների ինչպիսի շարժընթաց ունեն 3-րդ կետում ներառված ոլորտները:

ՅՆԱ-ի անկման հավանականությունը բացառելու համար անհրաժեշտ կլինի հաստատել հետևյալ հանգամանքները. (սրանք անհրաժեշտ, բայց դեռևս ոչ բավարար են).

A. աճի միտում այն ոլորտներում, որոնց նկատմամբ ՅՆԱ-ն բավական զգայուն է,

B. պահպանվում են թողարկման ծավալները (0-ական աճ) կամ առկա է ոչ մեծ աճ այն ոլորտներում, որոնք ունեն համեմատաբար կայուն թողարկում (2-րդ կետի ոլորտներ),

C. թողարկման ծավալի ոչ մեծ փոփոխություններ 3-րդ կետում ներառված ոլորտներում:

Տնտեսության ոլորտների և ՅՆԱ-ի փոխազդեցության զույգային կոռելացիայի գործակիցների վեր բերված մատրիցն ու դրա հիման վրա տնտեսության ոլորտների այս խմբավորումը կարելի է օգտագործել վերջիններիս թողարկման ծավալների փոփոխությունների ազդեցությամբ ՅՆԱ-ի փոփոխությունները կարճ ժամկետում կանխատեսելու և գնահատելու նպատակով: Կանխատեսման արդյունքների հիման վրա անկում, կամ աճի տեմպերի նվազումը գրանցած ոլորտներում պետական խթանման կարճաժամկետ «թիրախային» ծրագրերի իրականացմամբ հնարավոր կլինի պահպանել տնտեսական աճի տեմպերը «կառավարելիության» միջակայքում՝ թույլ չտալով արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված խորը տնտեսական անկումներ: Փորձարկենք այս համակարգը 2015թ.-ի 1-ին եռամսյակում տնտեսության առանձին ոլորտների թողարկման ծավալների փոփոխությունների ազդեցությունը հանրապետության ՅՆԱ-ի վրա գնահատելու համար:

Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2015թ. հունվար-մարտ ամիսներին 2014թ. հունվար-մարտի համեմատությամբ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

A. կետի մասով՝

- գյուղատնտեսության ոլորտում ստեղծված արդյունքն աճել է 6.6%-ով¹²,
- շինարարության ոլորտում ստեղծված արդյունքն աճել է 0.8%-ով¹³,
- առողջապահությունում ստեղծված արդյունքը նվազել է 6.1%-ով¹⁴:

Չենք կարող ասել, որ անհրաժեշտ պայմանները բավարարվել են լավագույնս, սակայն եթե հաշվի առնենք, որ գյուղատնտեսության նկատմամբ ՀՆԱ-ն շատ ավելի զգայուն է (գործակիցը՝ 0.9), քան առողջապահության (գործակիցը՝ 0.7), ապա կարելի է պնդել, որ գյուղատնտեսության ավելի մեծ չափով աճը կչեզոքացնի առողջապահության նվազումը և **A**. կետի մասով տնտեսական աճ կապահովվի: Սա ապացուցելու համար դիտարկենք բացարձակ արժեքով փոփոխությունը. գյուղատնտեսությունն աճել է 5228.6 մլն դրամով, շինարարությունը՝ 337.4 մլնով, առողջապահությունը նվազել է 665.7 մլնով, հետևաբար՝ ՀՆԱի վրա ազդեցությունը կարելի է համարել դրական ($5228.6 \cdot 0.9 + 337.4 \cdot 0.5 - 665.7 \cdot 0.7 = 5340.43$ մլն):

Ընդհանուր առմամբ, A կետում ներառված ոլորտների մասով գրանցվել է 5340.3 մլնի աճ:

B. կետի մասով՝

- մշակող արդյունաբերության արդյունքն աճել է 0.6%-ով¹⁵,
- էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 18.6%-ով¹⁶,
- առևտրի ոլորտում ստեղծված արդյունքը նվազել է 6.3%-ով¹⁷,
- հյուրանոցների ոլորտում ստեղծված արդյունքը նվազել է 4.6%-ով¹⁸,
- տրանսպորտի և կապի ոլորտում ստեղծվածը նվազել է 16%-ով¹⁹,
- ֆինանսների և ապահովագրական ոլորտի արդյունքն աճել է 17%-ով²⁰,
- անշարժ գույքի ոլորտում ստեղծված արդյունքը նվազել է 6.8%-ով²¹,
- պետական կառավարման ոլորտի արդյունքն աճել է 3.7%-ով²²,
- կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների ոլորտում ստեղծված արդյունքն աճել է 0.4%-ով²³,

Ընդհանուր առմամբ, B կետում ներառված ոլորտների մասով գրանցվել է 46326.1 մլն դրամի անկում:

¹² http://armstat.am/file/article/sv_03_15a_122.pdf, էջ 48,

¹³ http://armstat.am/file/article/sv_03_15a_123.pdf, էջ 49,

¹⁴ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող Q,

¹⁵ http://armstat.am/file/article/sv_03_15a_121.pdf, էջ 38, տող C,

¹⁶ http://armstat.am/file/article/sv_03_15a_121.pdf, էջ 39, տող D, E,

¹⁷ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 65,

¹⁸ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող I,

¹⁹ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող J, H,

²⁰ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 74, տող K,

²¹ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող L,

²² http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող N, M,

²³ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող N, M,

Շ կետի մասով՝

- հանքագործական արդյունաբերությունը՝ արդյունքն աճել է 27.7%-ով²⁴,
- կրթության ոլորտում ստեղծված արժեքը նվազել է 2.9%-ով²⁵:

Ընդհանուր առմամբ, Շ կետում ներառված ոլորտների մասով գրանցվել է 12332.6 մլն դրամի աճ:

2015թ. հունվար-մարտի ընդհանուր փոփոխությունը 2014թ. հունվար-մարտի համեմատ կազմել է -29093.2 մլն դրամ: Հարկերի աճը կազմել է 8510.1 մլն դրամ, որը չի չեզոքացնում նախորդ կետերում արձանագրված նվազումը: Ստացվում է, որ 2015թ. առաջին եռամսյակի տվյալներով ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքային փոփոխությունների տեսանկյունից ՀՀ տնտեսական անվտանգության պատկերն այնքան էլ հուսադրող չէ: Այժմ փորձենք պարզել այս երևույթի պատճառները.

1. 2015թ. հունվարից ԵԱՏՄ անդամակցության հետևանքով առաջացած ժամանակավոր անորոշություն:

Դրսևորումը՝

• 2015թ. հունվար-մարտին 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման նվազում՝ 23.1%²⁶: Ընդ որում՝ ՀՀ-ից ՌԴ արտահանվող ապրանքները կրճատվել են 97.9%-ով, Բելառուս արտահանվողները՝ 97.3%-ով, ԱՊՀ երկրներ ընդհանուր արտահանումը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արտահանման 10.8%-ը՝ նվազելով 89.2%-ով, իսկ ԵՄ արտահանումը կրճատվել է 12.8%-ով²⁷:

• 2015թ. հունվար-մարտին 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ ներմուծման նվազում՝ 30.5%²⁸,

• ընդհանուր փոփոխությունը կազմել է -16097.6 մլն դրամ: Այս ցուցանիշը բնականաբար չի համընկնում ՀՆԱ-ի փոփոխության հետ, քանի որ այստեղ ներկայացված են նաև միջանկյալ սպառման ապրանքները, որոնք ՀՆԱ-ի մեջ չեն հաշվառվում: Աղյուսակ 3-ում ներկայացված է 2015թ. 1-ին եռամսյակում տնտեսության առանձին ոլորտների թողարկման ծավալների փոփոխությունը՝ հաշվարկված ՀՀ ԱՎԾ-ի կողմից:

²⁴ http://armstat.am/file/article/sv_03_15a_121.pdf, էջ 38, տող B,

²⁵ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf, էջ 73, տող P,

²⁶ http://armstat.am/file/article/sv_03_15a_411.pdf էջ 133,

²⁷ http://armstat.am/file/article/sv_03_15a_411.pdf էջ 130,

²⁸ http://armstat.am/file/article/sv_03_15a_411.pdf էջ 133:

Աղյուսակ 3. Տնտեսության ոլորտների թողարկման ծավալների փոփոխությունը 2015թ. հունվար-մարտին

		Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ զննորվ. մլն. դրամ	Փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %	Փոփոխությունը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ, %
Գյուղատնտեսություն²⁹	Հունվար	16998.6	101.5	26
	Փետրվար	26004.9	104.9	154.3
	Մարտ	31902.9	105.7	124
	1-ին եռ.	74906.4	104.5³⁰	25
Արդյունաբերություն³¹	Հունվար	87042.6	93.7	68.2
	Փետրվար	96797.0	108	113.8
	Մարտ	104898.7	104	109.2
	1-ին եռ.	288738.3	102³²	77.6
Շինարարություն³³	Հունվար	7672	103.1	8.7
	Փետրվար	11999.1	101.2	153.8
	Մարտ	22837.7	99.7	186.6
	1-ին եռ.	42508.8	100.8³⁴	22.1
Առևտուր³⁵	Հունվար	120502	92.6	35.8
	Փետրվար	149351.7	93.6	125.0
	Մարտ	173009.9	94.7	116.2
	1-ին եռ.	442863.6	93.7³⁶	55
Ծառայություններ³⁷	Հունվար	83863.1	103.8	67.9
	Փետրվար	81191.9	105.3	96.9
	Մարտ	89344.9	102.8	109.7
	1-ին եռ.	254399.9	103.9³⁸	79.2

Հունվարին գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում նախորդ ամսվա նկատմամբ գրանցված հսկայական անկումը պայմանավորված է սեզոնայնությամբ և մտահոգության տեղիք, թերևս պետք է չտա, առա-

²⁹ http://armstat.am/file/article/sv_03_15a_122.pdf էջ 46,

³⁰ Համեմատության համար նշենք, որ 2014թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գյուղատնտեսության աճը կազմել է 5.2%:

³¹ http://armstat.am/file/article/sv_03_15a_121.pdf էջ 38,

³² Համեմատության համար նշենք, որ 2014թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ արդյունաբերական անկումը եղել է 2.8%, ի տարբերություն ներկայիս 2% աճի:

³³ http://armstat.am/file/article/sv_03_15a_123.pdf էջ 50,

³⁴ Համեմատության համար նշենք, որ 2014թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ շինարարության անկումը եղել է 18.2%, ի տարբերություն ներկայիս 0.8% աճի:

³⁵ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf էջ 65,

³⁶ Համեմատության համար նշենք, որ 2014թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ առևտրի աճը եղել է 4.5%, ի տարբերություն ներկայիս 6.3% անկման, այսինքն՝ սա հենց այն ոլորտն է, որը մտահոգության տեղիք է տալիս հետագա աճի ապահովման տեսանկյունից, քանզի ՀՆԱ-ում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ոլորտներից է:

³⁷ http://armstat.am/file/article/sv_03_15a_126.pdf էջ 74,

³⁸ Համեմատության համար նշենք, որ 2014թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ծառայությունների ոլորտի աճը եղել է 3.5%, ներկայումս այն 3.9% է:

վել ևս, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 2 ոլորտներում էլ աճ է գրանցվել միաժամանակ: Իհարկե արդյունաբերության, առևտրի և ծառայությունների ոլորտներում հունվարին նախորդ ամսվա համեմատ գրանցված զգալի անկումը կարող է պայմանավորված է լինել հունվար ամսվա աշխատանքային օրերի քանակով և հետտոնական գործոնով, սակայն առավել հավանական է, որ արդյունաբերության և առևտրի ոլորտում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անկումը պայմանավորված է ԵԱՏՄ անդամակցության հետ կապված ժամանակավոր անորոշությամբ. ներմուծումը նվազել էր, քանի որ տնտեսվարողները դեռևս հստակ չէին պատկերացնում, ոչ ԵԱՏՄ երկրներից ներմուծվող ապրանքների կարգավիճակը, նույնը կարելի է ասել նաև ոչ ԵԱՏՄ արտահանվող ապրանքների մասին, ինչի արդյունքն է արդյունաբերության անկումը:

Ընդհանուր առմամբ, մտահոգության առիթ տալիս է հիմնականում 1-ին եռամսյակում առևտրի գրանցած անկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, քանզի մյուս ոլորտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են, ավելին՝ 1-ին եռամսյակի քիչ աճը պայմանավորված է հունվար ամսին գրանցված հսկայական անկմամբ:

Առևտրի նվազումը պայմանավորված է.

• 2015թ. հունվար-մարտին 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ ներմուծվող ապրանքների միջին գների աճով՝ 8.3%³⁹,

ՌԴ տնտեսական ճգնաժամի արդյունքում 2015թ. հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ֆիզիկական անձանց փոխանցվող տրանսֆերտների նվազմամբ (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4 ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած դրամական փոխանցումները, մլն. դրամ⁴⁰

Ամիսներ	Հունվար-14	Փետրվար-14	Մարտ-14	Հունվար-15	Փետրվար-15	Մարտ-15
Ընդամենը ներհոսք, այդ թվում՝	49 903	57 088	66 049	34 333	41 862	54 044
Ռուսաստանի Դաշնությունից	35 539	41 006	45 507	18 254	23 745	29 131
ԱՄՆ-ից	3 788	4 243	4 713	5 363	5 894	6 800

Այսպիսով, կարելի է փաստել, որ 2002-2008թթ. ՀՀ տնտեսական աճի «թիրախները» ճիշտ չէին ընտրված, ինչն էլ հանգեցրել է տնտեսության կառուցվածքային ձևախեղումների՝ սահմանափակելով հետագա տնտեսա-

³⁹ http://armstat.am/file/article/sv_03_15a_130.pdf էջ 83.

⁴⁰ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>, ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած դրամական փոխանցումներ (ամսական):

կան աճի հնարավորությունները: Հետագայում՝ 2009-2015թթ., թեև կառուցվածքային տեղաշարժերը շարունակվել են և ՀՆԱ-ի աճի «թիրախները» փոփոխվել են, այնուամենայնիվ, դրանք նույնպես չեն նպաստել ՀՀ տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանը: ՀՆԱ-ի մեջ ընդհանուր ծառայությունների (ներառյալ առևտուրը) մասնաբաժնի աճը մինչև 50%, իսկ դրա մեջ մեծ ավելացված արժեք ստեղծող ծառայությունների փոքր տեսակարար կշիռը (Օրինակ՝ ՏՏ, զբոսաշրջություն) էականորեն սահմանափակել են տնտեսական աճի ապահովման «աղբյուրները», քանի որ վերը նշված գործոնների արդյունքում, բնակչության գնողունակության անկումը դարձել է ծառայությունների ծավալների նվազման պատճառ, որն ուղղակի արտահայտվել է տնտեսական աճի տեմպերի վրա: Այսինքն, 2015թ. տնտեսական աճի բեռը «ծանրացել է» բացառապես գյուղատնտեսության և հանքաարդյունաբերության ոլորտների վրա, որոնք ներկայացնում են տնտեսության իրական հատվածի արտահանելի ոլորտները: Այս հանգամանքը, միջազգային և տարածաշրջանային զարգացումների հետ մեկտեղ, առավել դժվարացրել է հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները: Կարծում ենք, որ ներկա իրողության պայմաններում առավել սրվում է ՀՀ տնտեսական աճի ապահովման նոր մոդելի գործարկման անհրաժեշտությունը, որը պետք է հիմնված լինի արտադրական ոլորտի զարգացման վրա և հնարավորինս միտված կլինի արտահանմանը:

Թաթուլ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ տնտեսական անվտանգության խնդիրները տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի պայմաններում

Բանալի բառեր. տնտեսական անվտանգություն, ճգնաժամ, գնողունակություն, ավելացված արժեք, տնտեսական աճ

Մինչճգնաժամային՝ 2002-2008թթ. սկսված և ճգնաժամից հետո շարունակվող տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը, իսկ վերջին շրջանում (2014-2015թթ.) նաև տարածաշրջանային զարգացումները (ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցները, նավթի համաշխարհային գների անկումը, ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումները և այլն) զգալիորեն նվազեցրել են տնտեսական աճի ապահովման հնարավորությունները՝ դառնալով տնտեսական անվտանգության սպառնալիք: Սույն հետազոտությամբ վեր են լուծվել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը պայմանավորող գործոնները:

Tatul MKRTCHYAN

Economic Security Issues of RA in Conditions of Structural Shifts of the Economy

Key words: economic security, crisis, purchasing power, added value, economic growth

The structural shifts of the economy that started in pre-crisis years 2002-2008 and continued after the crisis and in the latter time period (2014-2015) also the regional developments (sanctions against the RF, world decline of the prices for oil, USD exchange rate fluctuations, etc.) have considerably reduced the opportunities to ensure economic growth in the RA, and it becomes a threat for economic security. This research has analyzed the factors that cause the structural shifts of the economy and assessed the possibility for economic growth in the RA in the current structure of the economy.

Татул МКРТЧЯН

Проблемы экономической безопасности РА в условиях структурных изменений экономики

Ключевые слова: экономическая безопасность, кризис, покупательная способность, добавленная стоимость, экономический рост

Структурные изменения, начавшиеся в докризисные годы 2002-2008 и продолжившиеся после кризиса, а в последний период времени (2014-2015гг.) также события территориального и глобального характера (санкции по отношению РФ, падение мировых цен на нефть, колебания обменного курса доллара США и т.д.) существенно уменьшили возможности обеспечения экономического роста в РА, став угрозой для экономической безопасности. В рамках данного исследования были проанализированы факторы, обуславливающие структурные сдвиги и оценена возможность экономического роста в РА, в условиях сформировавшейся структуры экономики.